ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/2 պայմանագրի

ք. Երևան «24» «03» 2022թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Արտ կոնստրակտ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հայրապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով **ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների <<ՓՈՒԼ-2>>-ով /բնակելի տներ և արտաքին ինժեներական ենթակառուցվածքներ/ նախատեսված թվով 13 բնակելի տների շինարարական աշխատանքների** իրականացման համար Կողմերի միջև 19.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին՝ հաստատել 2022 թվականի աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը և վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի N1 և N2 հավելվածները՝ բաղկացած մեկական էջերից, համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Արտ կոնստրակտ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Շորին-Ձոր/ թաղ.3
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն
_____ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N1
19.07.2021թ. կնքված
N ՀՀԲԿ-ՀՄԱՇՁԲ-21/2 պայմանագրի
«24» «03» 2022թ. կնքված N1 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների <<ՓՈՒԼ-2>>-ով /բնակելի տներ և արտաքին ինժեներական ենթակառուցվածքներ/ նախատեսված թվով 13 բնակելի տների շինարարական աշխատանքների

2022թ. հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

N	Գումար /ՀՀ դրամ/	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը*
1	406 240 463,78	30.06.2022թ.
Ընդամենը	**406 240 463,78**	**30.06.2022թ.**

Աշխատանքների կատարման սկիզբ է համարվում համաձայնագրի կնքման օրվան հաջորդող օրը:

Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխությունները անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Արտ կոնստրակտ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Շորին-Ձոր/ թաղ.3
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն

_____ Ս. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
19.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/2 պայմանագրի
«_____» «_____» 2022թ. կնքված N1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Աշխատանքի անվանումը	2021թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/1	ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների <<ՓՈՒԼ-2>>-ով /բնակելի տներ և արտաքին ինժեներական ենթակառուցվածքներ/ նախատեսված թվով 13 բնակելի տների շինարարական աշխատանքներ	318 500 000			41 317 000	165 268 000	165 268 000	165 268 000	330 536 000	330 536 000	330 536 000	406 240 463.78	406 240 463.78	406 240 463.78	406 240 463.78

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011036994
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Արտ կոնստրակտ>> ՍՊԸ
ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Շորին-Ձոր/ թաղ.3
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Գորիս>> մ/ճ
Հ/Հ 2475702910690000
ՀՎՀՀ 09202127

Տնօրեն՝

_____ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Արդշինբանկ

№ 652-2608

«23» 03 2022 թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՀԲԵՆ22/70-57
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ԱՐՏ ԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 19.07.2021թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/2 պայմանագրից և կնքվելիք թիվ 1 համաձայնագրից (այսուհետ նաև՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Արդշինբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 40,624,046.0 (քառասուն միլիոն վեց հարյուր քսանչորս հազար քառասունվեց) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև 01.06.2023թ. ներառյալ:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) ՀՀՔԿ-ՀՄԱՇՁԲ-21/2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործառնական տնօրենի տեղակալ-
Վարկային հետգործառնությունների վարչության պետ՝ Իրինա Աբրամյան

Գլխավոր հաշվապահ՝ Հովհաննես Մկրտիչյան

«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0015, Գր. Լուսավորիչ 13
(+37412) 222222
office@ardshinbank.am
www.ardshinbank.am